



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ - ԱԾԱԿԱՆԻ ԵՎ ՄԱԿԲԱՅԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱԿՍԵԼ
ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՀԵՂԻՆԱԿ ` ՍԵՏԱՔՍՅԱ ՍԻՄՈՆՅԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ _

ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՂԵԿԱՎԱՐ ----- ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

2022թ

Ներածություն

Բասուտա գետն է լեռներից հոսում

Եվ ձորերի մեջ զիլ զրնգում է,

Աթա ապերն է ծոր տալով խոսում,

Եվ Մեղրաքերծը դեռ դրնգում է:

Մինան գետի մեջ գորգ է լվանում,

Ոտքերը բաց են մինչև ծնկները,

Ինքն իր վշտի հետ զրույց է անում,

Ջուրը տանում է արտասուքները:

Լորի հինավուրց բլրակի վրա

Մայրամուտի մեջ արձանացել է

Շիկնած հայացքն այն խոնարհ աղջկա,

Որ ամբողջ կյանքում քեզ ուղեկցել է:

Հնձան է մտնում ծեր Դիլան դային՝

Հոգում հեռավոր օրերի ցավը,

Եվ հուշերի մեջ թնին է տալիս

Իր ձեռից թռած ոսկե միրհավր:

Հազրոն նստել է օջախի քարին,

Հիշում է կորած երկիրն ու հողը,

Տխուր նայում է Հայկական պարին

Եվ նայում է ծիրանի փողը:

Ամեն մեկի մեջ մարմին է առած

Աշխարհի բարին ու բարությունը,

Եվ ես ամեն օր լսում եմ նրանց

Հավիտենական շնչառությունը:

Կան գրողներ, որոնց անունը տալիս անմիջապես պատկերացնում ես ուրույն ու անկրկնելի մի աշխարհ, որը թեև հավերժորեն եղել է նրանցից առաջ և հավիտենորեն գոյություն կունենա նրանցից հետո, բայց որն իր առանձնահատուկ գեղեցկություններով բոլորովին հայտնի է նրանց անունով և նրանց շնորհիվ:

Այդպիսի գրող է հայ արձակի նշանավոր դեմքերից մեկը՝ Ակսել Բակունցը, որը գրականություն մուտք գործեց՝ իր հետ բերելով զանգեզուրյան բնաշխարհի նախնական ու վայրի պատկերները, լեռներում ապրող պարզ ու անապական մարդկանց հոգու գեղեցկությունների ու լուռ ողբերգությունների պատմությունները: Բակունցի շնորհիվ հայ գրականության մեջ հավերժական գրանցում ստացավ զանգեզուրյան աշխարհը, որտեղից գալիս էր ինքը և որը պատկերավոր անվանեց Մթնաձոր, այսինքն՝ նախաստեղծ մի աշխարհ՝ մարդու, հողի, բույսերի ու կենդանիների հազարամյա դաշինքով, երբ փոխադարձ հաղորդակցության միջոցը դառնում է անիտու ճանաչողությունը, իսկ գրողի վերարտադրման համար՝ «հնամենի, բուրյան» բառերի լեզուն...

Բակունցի գրական կյանքն սկսվեց հեքիաթի նման: Երբ 1926 թվականի մարտին Եր կան մտավ, արդեն ճանաչված գրող էր: Գորիսից մայրաքաղաք եկած գյուղատնտեսը անմիջապես գտավ իր շրջանը: Նրա գրական դիրքը բարձր էր, տեղն արդեն՝ Չարենցի կողքին: Այս հայտնությունը և հաջողակ մուտքը թվում էր անսպասելի և շլացուցիչ: Քչերը գիտեին, որ նոր տաղանդը թրծվել է բազում դեպքերի ու անցքերի մթնոլորտում, անցել է գրողի համար նախանձելի, բայց ծանր ճանապարհ և իմաստալից անցյալ:



Գլուխ I

Գնահատանքի խոսքեր

Բակունցը, ճշմարտությամբ տալով հայ գյուղի կյանքը, հայ աշխատավոր գյուղացու հոգեբանությունն ու ձգտումները, ուժգնորեն սիրելով նրան և ապրելով նրա ճակատագրով, ինքն էլ իր գեղարվեստական պատկերներն ստեղծելիս

կանգնած է իր այդ սիրելի հերոսների, հայ գեղջուկների կողքին, նրանց աչքերով է տեսնում ու նկարագրում մարդկանց, իրերը, բնությունը: Ակսել Բակունցին երբեմն անվանում են հայ արձակի Տերյան: Ոմանք էլ նրան բնորոշում են որպես թումանյանական լեզվի ավանդների շարունակող: Որքան իրարամերժ թվան այս 2 բնորոշումները, դրանք երկուսն էլ ճիշտ են: Բակունցի լեզվի մի կարևոր առանձնահատկությունն այն է, որ նրա ստեղծագործության մեջ հայ գրականության լեզվական այդ 2 ուղղությունները ստեղծագործաբար միահյուսվեցին, այնպես, որ գոյացավ բոլորովին նոր որակ, լեզվագեղագիտական նոր զգացողություն...

Զգում ենք մեր թումանյանական պայծառ ժողովրդայնությունը, մերթ տերյանական ոսկեդենիկ հայերենի շողարձակումը, իսկ հաճախ երկուսը միաժամանակ: Բակունցը հայ գյուղի քնարերգուն էր, ջերմ սիրով լի այդ գյուղի, հայ գյուղացու, նրա դարավոր ավանդույթների նկատմամբ... ոչ միայն բանաստեղծ, այլ և ասպետ գրող էր, նաև հայոց լեզվի, հայ դպրոցի նվիրյալ ասպետը:

Ռաֆայել Իշխանյան

Պատմության և բնության զարմանալի ներդաշնակ համաձայնությամբ էր կյանքի կոչված նա: Մշտապ ելեռ, ներհուն ու թախծոտ հայացքով նա ասես հավաքել էր ուզում նորածագ արևի փրկարար հզորությունը և կիզել ինչ-որ անլուծելի գաղտնիքների հանգույցը: Հավերժ սիրելի ու աչքիս առջև կենդանի կանգնած Ակսելի յուրաքանչյուր բառի ու դարձվածքի մեջ մերթ մրմնջում են, մերթ երգում Հայաստան աշխարհի երկնահաս լեռներն ու անդնդախոր վիհերը, անհուն երկինքն ու արագավազ գետերը, և այդ ամենից վեհ ու պայծառ ` Հայաստանի հրաշք արևը:

Մարտիրոս Սարյան

Պետք է ունենայ, սակայն, Ակսելի վրձինը ` կենդանի գույներով նկարելու համար այն երազկոտ զանգեզուրցուն, որն իջել էր հայրենի լեռներից, որպեսզի տասը տարվա ընթացքում բարձրանա մեր գրականության Արարատը: //Մկրտիչ Արմեն//

Գլուխ II

Գրականությունը խոսքի արվեստ է

Գրականությունը խոսքի արվեստ է, որ գործ ունի լեզվի հետ, բառերի հետ: Լեզուն գրողի զենքն է, ինչպես նկարչի համար գույնն ու վրձինը, երաժշտի համար հնչյունը, ձայնը: Երկի գեղարվեստական կատարելության չափանիշը ոչ

միայն կյանքի ճշմարտացի պատկերումն է, այլև արտահայտչամիջոցների ամբողջությունը, կառուցվածքը, գրողի լեզուն և ոճը:

Գեղարվեստական խոսքն ունի լրացուցիչ՝ գեղագիտական դեր, քանի որ գրականությունն ի վերջո արվեստի առանձին տեսակ է: Դա էլ գրողից պահանջում է արտահայտչական համապատասխան լրացուցիչ միջոցների խստագույն ընտրություն, խոսքի գեղագիտական մշակում:

Գեղարվեստական գրականությունը ոչ միայն մտքերի, այլ և մարդկային նուրբ զգացմունքների, հույզերի, հոգեվիճակի, հաղորդման ու նկարագրության միջոց է, ուրեմն ունի և հուզական երանգ, ազդում է ընթերցողի հոգեկան աշխարհի, ապրումների վրա: Հուզականությունը նույնպես պահանջում է համապատասխան լեզվական-արտահայտչական լրացուցիչ միջոցների ընտրություն և գործածություն: Պատկերավորման միջոցների ճաշակով ընտրությունը և վարպետ օգտագործումը գրողի խոսքը դարձնում են գեղեցիկ, հուզական, ազդեցիկ, նպատակասլաց:

Գեղարվեստական գրականությունը արտացոլում է կյանքը, անցուդարձը, աչքի է ընկնում թեմաների բազմազանությամբ, նրա հերոսները կենդանի, ապրող, աշխատող մարդիկ են, որ գիտեն հուզվել, ոգևորվել, լալ, ծիծաղել, պայքարել, հետևաբար գրողը պետք է օգտվի լեզվի բոլոր հնարավորություններից:

Գրական լեզվի մշակման հարցում ունենալով որոշակի տեսակետ՝ Բակունցն ասում է. «Պետք է դնել մաքուր լեզվի, կենտրոնաձիգ լեզվի խնդիրը, և ես գտնում եմ, որ այդ լեզուն խարսխված պետք է լինի ժողովրդական լեզվի վրա: Դրա համար մենք պետք է ուսումնասիրենք Թումանյանի լեզուն, հասկանանք, թե իր ժամանակին Թումանյանն ինչպես է կարողացել օգտագործել բարբառները և ժողովրդական լեզուն, գրաբարը, զանազան պատկերներ:

Այսպիսով, Թումանյանը դառնում է այդ լեզվի նախահայրը, քանի որ Թումանյանը այս տեսակետից ավելի շատ տվյալներ ունի օգտակար լինելու, քան Տերյանի լեզվաշինարարական փորձը»:

Գլուխ III

Մակդիրը որպես պատկերավորման միջոց

Լեզուն ունի պատկեր ստեղծելու բազմաթիվ միջոցներ, հնարներ, որոնք կոչվում են պատկերավորման միջոցներ:

Կատարյալ պատկերներ ստեղծում են իրոք մեծ գրողները: Դրա համար անհրաժեշտ են ստեղծագործական վառ երևակայություն, լեզվազգացողություն:

Գեղարվեստական խոսքում պատկերավորության միջոցներից ամենահաճախ օգտագործվում է մակդիրը, նույնիսկ կարելի է ասել, որ գեղարվեստական խոսքն անհնար է պատկերացնել առանց մակդիրների: Ամեն մի դիպուկ մակդիր ինքնին մի պատկեր է, պատկերավոր մտածողություն: Վկայակոչենք Գ. Մարկեսին. «Ինձ համար ամենամեծ դժվարությունը ածականն է, ածականի տեղը, և դրանից է կախված, իմ կարծիքով, թե այսինչ գրվածքը պատկանում է, թե չի պատկանում գրականությանը: Ենթադրենք՝ նկարագրում եմ փոշոտ, ամայի մի գյուղ կիզիչ արևի տակ, կեսօրվա հանգստի ժամին, երբ այն անմարդաբնակ է թվում, և ես պետք է պատկերեմ մի կին, որը շարժվում է փողոցով կամ դատարկ հրապարակով, նա սև է հագած: Եթե հենց այնպես գրելու լինեմ, մի ածական կկայցնեմ արևին, մեկ ուրիշը՝ շոգին, փոշուն և այլն: Բայց եթե ես սահմանափակվեմ առաջարկները թվարկելով, իսկ վերջում կնոջ հագուստի սև գույնին ավելացնեմ, ասենք անողոք ածականը, ես միանգամից ի մի կրերեմ այն ամենը, ինչի մասին խոսել եմ՝ արևը, ամայի գյուղը, շոգը և այլն: Ես հանկարծ անսպասելի թանձրություն կհաղորդեմ ամբողջ պատկերին: Ինձ համար սա է գրականությունը, այն կախված է արտաքուստ անկարևոր, երկրորդական թվացող մի բանից՝ ածականից... Ածականն այն է, ինչ զանազանում է մի գրողին մյուսից, դա իրականությունը տեսնելու նրա եղանակն է, գույնը, ձայնը»:

Կարծում եմ՝ համաշխարհային ճանաչում գտած գրողի ասածը մեկնաբանելու հարկ չկա. Գրողը պետք է կարողանա գտնել դիպուկ մակդիրը: Մակդիրը քերականության մեջ կոչվում է որոշիչ, որ սովորաբար արտահայտվում է ածականով: Բայց բոլոր որոշիչները մակդիրներ չեն. Մակդիրը գեղարվեստական որոշիչն է, որ քերականական որոշիչից տարբերվում է: Մակդիրը

ունի հուզական երանգ՝ բնութագրող է, գնահատող և ոչ անվանող սովորական բառ, արտահայտում է հեղինակային վերաբերմունք, հաճախ անսպասելի, փոխաբերական, կապվում է նկարագրվող միջավայրի, տրամադրության, հերոսի հոգեբանության, արարքների հետ:

Գլուխ IV

Մակդիրների և մակբայների գործածությունը Բակունցի ստեղծագործություններում

Բակունցի ստեղծագործության գեղարվեստական արժեքը բարձրացնում են յուրօրինակ ու ինքնատիպ մակդիրներն ու մակբայները:

«Ալպիական մանուշակ» /մակդիր, ածական/

Ատամնաձև պարիսպ, սպիտակ ամպ, բարձր բուրգեր, երկաթե դռներ, կապույտ որձաքար, նեղ հուն, սպիտակ փրփուր, քարե շղթա, քարե արծիվ, կեն թուր կտուց, սրածայր նիզակներ, պողպատե զրահ, գունավոր բզեզ, ծիրանագույն բուրաստան, շոգ կեսօր, պատավ շինական, մելամաղձոտ ու հուսահատ երգ, տխուր քարափ, հեռավոր գյուղ, զրահապատ ձի, երկաթյա մուտք, ուսյալ աչքեր, եղեգնյա գրիչ, հին ճանապարհ, կիսամերկ երեխա, հնօրյա գլխարկ, մամռապատ մի քար, տաշած քար, փորագիր խոսքեր, սրածայր բուրգ, կեն ու արնագույն կտուց, ահեղ թափ, ոսկե գանձեր, ավելորդ մտքեր, ընդարձակ թանգարան, ատամնաձև քար, թարմ լավաշ, խուլ աղմուկ, սպիտակ ճակատ, սև աչքեր, մանուշակագույն աչքեր, բարակ մեջք, արծաթագույն սուրմաներ, բոբիկ ոտք, բրոնզե հայրցք, բարակ մորթի, կապույտ երակ, կիսավեր պարիսպներ, սրբող պատե փայլուն մանգաղ, մռայլ հնձվոր, խավար գիշեր, գիշերային խոնավություն, հոտավետ բուրաստան:

«Ալպիական մանուշակ» /մակբայ/

Ահարկու պտույտներ անել, դանդաղ սահել, պինդ բռնել, բարձր կանչել, ազահությամբ կախել, հաճախ բարձրացնում էր թեյամանի կափարիչը, ուրախ ժպտալ, աննկատ դողդողալ, դանդաղ բարձրանալ, անձայն հեկեկալ:



«Միրհավ» /մակդիր, ածական/

Պայծառ աշուն, կապտավուն սարեր, դառնաշունչ քամի, հաստաբուն կաղնի, ամայի ձորեր, պայծառ տիրություն, ջինջ օր, երիտասարդ կեռասենի, ուշ աշուն, ցուրտ գիշեր, աշնան արև, հին երգ, խաղաղ օր, քարե տաշտ, արնագույն շիրա, թունդ գինի, մութ խորշ, ջահել կին, բարակ մարմին, լույս ատամներ, փափուկ քայլ, դայար մարմին, անիմաստ մաքառում, անարատ գոհ, ոսկեդեղձան հյուս, լուսեղեն լանջ, շաղոտ խոտ, լուսնյակ գիշեր, լեռնային ծովակ, խոր երկինք, անամպ երկինք, գիշերվա հով, նարնջագույն քարեր, թավ երգ, ոսկեգույն ծղոտ, պառավ թուփ, բարակ մարմին, արդար ժպիտ, ծանոթ արտ, մերկ դաշտեր, կարմիր թուփ, փայլուն մասուր, խոնավ ու գով օր, ոսկեփետուր թռչուն, մամռոտ ժայռեր, դարավոր կաղնիներ, մթնկա խորշ, արնագույն տոտիկ, խոր շնչառություն, թանձր սաղարթ, արնոտ միրհավ, վիրավոր միրհավ, կարմիր երախ, անհուն դառնություն, տաք մարմին, քարքարոտ արահետ, պղտոր գինի, ոսկե մամուռ, անապակ գինի, հուշիկ քայլեր:

«Միրհավ» /մակբայ/

Մեղմ ճոնչալ, /հնձանի դոնակը մեղմ ճոնչում էր/, մաշված դուռը դողդոջ երգում էր, սրտաբուխ ընծայել, ագահ համբուրել, անհագուրդ հիանալ, արագ հեռանալ, անձայն իջնել, թռչում էր քարից քար, գիշեր-ցերեկ ջուրն աղմկում է, թռավ արնակոլոլ, տերևները անհանգիստ խմբվում էին, այս ու այն անկյուններում, թպրտում հուսահատ և անմունչ պատկում սև գուրի մեջ:



«Խոնարհ աղջիկը» /մակդիր, ածական/

Գարնանային առավոտ, մուգ կապույտ վիզ, գիշերվա ցող, հին անտառ, լայն ու փափուկ ճանապարհ, սպիտակ լույս, զրնգուն հաչոց, կարմրամորթ մարդիկ, անհրական աշխարհ, նարնջագույն արև, նահապետական բարք, բոց աչքեր, հին պատմություն, ծաղկատար դեմք, խորամանկ ժպիտ, ծեր աղվես, երանության ժպիտ, ներքին աշխարհ, ծուռումուռ փողոց, սպիտակ դեմք, մանրիկ աչքեր, հատուկտոր թուփ, գարնան բույր, զունավոր և հոտավետ փաթիլներով ձյուն, թեթև ակնարկ, աշխույժ ճովղղուն, անսովոր հաճույք, հին տարիներ, բարի աչքեր, կապույտ քար, խելոք աչքեր:

«Խոնարհ աղջիկը» /մակբայ/

Արահետն օձապտույտ ոլորվում էր, դեսուդեն վազել, արագ - արագ անցնել գյուղի փողոցներով, մի վայրկյան կանգ առնել, եզները դանդաղ քաշում էին արտոր և հանգստացած հողը շրջում ակոսի մեջ:



«Այու սարի լանջին» /մակդիր/

Հանգած օջախ, չորացած աղբյուր, թաքուն միտք, հին հաշիվներ, ձմռան ամբարած խոնավություն, այգիների մեջ թաղված քաղաք, չարքաշ դեմք, միամիտ սեր, խելագար ցանկություն:

«Այու սարի լանջին» /մակբայ/

Շուտ-շուտ դռան կողմը նայել, խումբ-խումբ խոսել, մուշ-մուշ քնել օրորոցի բարուրների մեջ, շիվար ետ դառնալ, տնքալով խոսքն ասել, գարնան ծիծեռնակի պես երնաց, երազի պես հիշել, անխոս հեռանալ, շարժվել կանաչ թրթուրի պես, երկար միտք անել, փնչոցով որոճալ, վախվիսալով ձեռք տվալ հրացանին, մեղմ մաղել /Անձրևը մաղում էր մեշմ/: Այգիների մեջ թաղված քաղաքը դաշտի վրա օազիսի նման էր երևում: Փորում էր Պետին անվարժ շարժումներով, և քրտինքը սնդիկի հատիկների պես գլորվում էր նրա ծաղկատար ճակատից: Պետին ձգվեց հասակով մի: Այդպես ընկնում է խոտը կիսաչոր, երբ գերանդին սլլալով կտրում է ներքևից:




«Օրանջիա» /մակդիր/

Երկչոտ իլեգներ, բարակ արահետ, սանձարձակ ձի, գազիր որդեր, սուր ժամանակ, խառը տարի, լոթի-փոթի մարդիկ, սաստանի հունար

«Օրանջիա» /մակբայ/

Աչքի տակով նայել, ավելի շուտ է հավիում, մի առավոտ աչքի տակով նայեց, վերադարձին աչքի տակով նայեց, արևաթաթախ տուն տանել, շշուկով պատմել: Երկու տան մեջ թշնամությունը հնուց կար: Երբեմն նայում էր, սանձարձակ ձիու պես ծառս լինել, իրար բոթելով շարժվել: Չոբաններն ահից ոչխարը մի վերստ էլ հեռու էին քշում: Հանկարծ նեղը գցել, թաքուն ժողով անել, մի անգամ երևալ գյուղում, բեղերը ոլորելիս թշերն ուռեցրեց գուննա փչողի պես: Վերջին անգամ պռոշները լիզել, միշտ ավելացնել, Կրակը հանդարտեց լուստ դեմ: Ամեն գարնան Օրանջիայում այնքան՝ վարդեր են լինում՝ դեղին, սպիտակ:



Քլուխ V

Պատկերավորություն

Պատկերավորությունը գեղարվեստական խոսքի հիմնական տարրերակիչ հատկանիշն է, գրողը պատմում, հաղորդում է պատկերներով: Գեղարվեստական խոսքում ամենից առաջ զգացվում է գրողի, հեղինակի վերաբերմունքը պատկերավոր երևույթի նկատմամբ, որ արտացոլվում է իբրև խոհ, զգացմունք, գնահատական:

Պատկերները, հատկապես բնության նկարագրությունը, ինքնանպատակ չպետք է լինեն, նրանք պետք է նպաստեն խոսքը, համոզիչ, տպավորիչ դարձնելուն, դառնան գրական հերոսի գործողությունները, գործելակերպը, վարվեցողությունը, պայմանավորվող գործոններ, միջավայր: Այդպիսի բազմաթիվ օրինակներ կան Բակունցի պատմվածքների մեջ:



«Սպիտակ ձին» պատմվածքում Բակունցը գրում է. «Հրապարակի մի անկյունում տախտակներից շինած փոքրիկ բարձրության վրա, դագաղի նման սեղանի շուրջը նստել էին իշխանավորները»: Այստեղ դագաղի նման սեղան պատկերարտահայտությունը նշանակում է, որ մարդիկ անօգնական վիճակում են, նրանցից իսկում են ընտանիքը կերակրելու վերջին հույսը՝ ձիուն, նրանք այնպիսի ծանր ապրումներ ունեն, որ հիշեցնում է հարազատի մահ, կորուստ, և դրա համար էլ սեղանը դագաղ է թվում:

Պատկերները, պատկերավոր նկարագրություններն ունենում են կենտրոնական, առանցքային բառեր, որոնք ծառայում են որպես հիմք պատկերի կառուցման համար:

Բակունցի պատմվածքներում հանդիպում ենք պատկերի դիպուկ օրինակների:

«Հեռվից խաղալով և խայտալով վագում էր սպիտակ ձին, քամին փոփոացնում էր բաշը, և ձին լայն կրծքով ճեղքում էր լեռնային օդի սառն ալիքները: Փռչի չէր բարձրանում գետնից և թվում էր, թե ձիու արագավագ ոտները չեն դիպչում գետնին, և պայտերը զրնգում են օդի մեջ: /«Սպիտակ ձին»/

«Քամին հալածում է մառախուղի թանձր քույաները: Նրանք խրտնած ոչխարի պես փախչում են ձորերով: Մառախուղի փեշերից ցցվում են պղնձագույն ժայռերի կոնուսները: Քարափոր տներից կապույտ ծովը ձգվում է դեպի վեր և լիզում խոնավ ժայռերը: /«Բրուտի տղան»/

Լուսանում է. լեռան հետևից ելնում է արեգակը, մամուռից պոկվում են անձրևի կաթիլները և ջինջ արցունքի նման շողշողում: Ահա հեռվում երևում են այգիների գորշ պարիսպները և տների պատերը՝ կառուցված նույն հին կավից: Արևը խանձել է, քամին և անձրևը պոկել են պարիսպների կատարները, մի տեղ փոս արել, մի ուրիշ տեղ թողել սրածայր:

Նստել են կավե հին պատերն այս ընդարձակ դաշտում, ինչպես չոքած ուղտեր: Նրանցից մեկը ցցել է վիզը, մյուսի միայն սապատն է երևում, երբորդը չոքել է առաջին ոտքերի վրա, կարծես հիմա պիտի իջեցնի և հետին ոտքերը» /«Սև ցեղերի սերմնացանը»/

«Լռություն կա Կաթավաբերդի ավերակներում: Միայն ձորի մեջ աղմկում էր Բասուտա գետը, քերում է ավերքը և հղկում հունի կապույտ որձաքարը: Բր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ռոնում են հազար գամփոներ և կրծում քարե շղթաները: /«Ալպիական մանուշակ»/

Այս պատկերները այնքան կենդանի են, խոսուն, պետք է միայն զգալ, պատկերացնել...

Գրողի վարպետությունը ամենից առաջ երևում է բառի նրբության և բառագործածության հարցում: Բառը, ինչպես ասում էր Մ. Գորկին «Բոլոր փաստերի հագուստն է», որովհետև բառն անվանում է հասկացություններ, լեզուն ի վերջո լեզու է բառերի շնորհիվ:

Բառնորոշյալք են առաջին հերթին պայմանավորված երկի պարզությունը, արտահայտչականությունը, հոգեհարազատությունը:

Գրողը պետք է ունենա բառի արտակարգ զգացողություն, զգա նրա համը, հոտը, գույնը, ձայնը, նրբիմաստը, զգա և գիտակցի, որպեսզի գրական երկը դառնա մի կատարյալ հյուսվածք:

Բակունցի ցանկացած պատմվածք նրբագեղ է և խորունկ, մի կատարյալ հյուսվածք: «Ալպիական մանուշակը» դժվար կյանքի գեղարվեստական պատմություն է, մի կյանք, որ լի է ցավերով, տրորված գեղեցկություններով, տանջվող մարդկանցով:

Ինչպե՞ս է գրողը նկարագրում աշխարհը, Կաքավաբերդը, ալպիական գեղեցկությունները: «Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամս է նստում», - այսպես է սկսվում պատմվածքը, և բացվում է մի ինքնատիպ աշխարհ: Հետևում է խստաշունչ բնության էպիկական պատկերը. «Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հաշվում են ամպի ծվենները, պարսպի վրա երևում են մացառներ, աշտարակի խոնարհված գլուխը և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպներ... Պարիսպների գլխին բույն են դրել ցիւր և անգղը: Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, նրանք կոնյունով աղմկում են, թոչում են բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարին: Ապա բարձրանում է քարե արծիվը՝ կտուցը կեռ թուր, մագիլները՝ սրածայր նիզակներ, փետուրները որպես պողպատե զրահ»:

Այս բնությունը քնքշացնում է միայն մի ծաղիկ՝ ալպիական մանուշակը՝ ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն:

Խստաշունչ նկարագիրը հիշեցնում է նաև կյանքը: Կաքավաբերդի անկրկնելի պատկերը ընթերցողին տանում է դեպի մարդկանց աշխարհը: Ուլքե՞ր են ապրում այդ բնության մեջ, նման չե՞ն արդյոք նրանք ալպիական մանուշակի ծաղկափոշու մեջ թաթախված բզեզին, որին մանուշակը ճոճք է թփում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան»:

Բակունցը յուրահաստուկ ինքնատիպությամբ (պատկերներով) պատկերավորությամբ է նկարագրում վայրենի խանդի բռնկումը. «Խանդը կայծակի

պէս փայլատակեց մոայլ հնձվորի սրտում: Աչքերը լայնացան, նա գունատվեց: Մայրը նայեց տղային, հրդեհվեց դեմքը: Հայրը տեսավ կնոջ դեմքի կարմիրը: Այդ ամենը կատարվեց մեկ վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գագազած արջի նման ուստյուն արեց, նրա մագոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակը անասելի թափով իջավ կնոջ թիկունքին: Սուրմաները զրնգացին, ցնցվեցին կնոջ երկար ծամերը: Եռոտանու վրա դրած թեյամանը թափվեց: Մահակի ջարդված ծայրը թռավ ծայքի վրա: Կինը աղաղակ չհանեց, այլ ցավից գալարվեց: Նա ձեռքը թիկունքին տարավ, ապա դուրս եկավ վրանի դռանը անձայն հեկեկալու: Տղան դատարկ տուփերը ձեռքին հետևեց նրան և պահվեց մոր փեշերի տակ: Մարդը մի քիչ էլ դժգոհեց, ապա կերավ կորեկ հացը և, փափախը գլխի տակ, մեկնվեց խսիրի վրա... »:

Ահա այսպէս, այս թշվառ անկյունը մի պահ կապվում է մեծ աշխարհի հետ և նորից խիտունջի պէս ետ քաշվում իր պատյանը: Ահա դարձյալ մի գեղեցիկ պահ, որը խաթարվում է դազանակի դաժան հարվածով:

Վերջին պատկերն էլ միանում է կենսափիլիսոփայությանը. « Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խիտունջի պէս տղաց դեպի վրանները, խոնավություն կաթեց քարերի վրա, մամուռների վրա, և մակադած ոչխարների բրդի վրա նստեց գիշերային խոնավությունը: Յող կաթեց ալպիական մանուշակի ծաղկաթերթի վրա: Բուրմունքից արբեցած մի բզեզ քնել էր առէջների մեջ և նրան այնպէս էր թվում, թէ աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մանուշակ»:

Այս բոլորի հետ միասին զարմանք են պատճառում մանրամասների բնականությունն ու հարստությունը: Նա ապրումների համար ստեղծում է մթնոլորտ, պատկերի մեջ քաշում նաև կենսաձևը, կենցաղը, որոնք ստեղծում են իրական կյանքի պատրանքը: Ծեծի հատվածի մեջ երևում են բնորոշ մանրամասներ. Ծանր մահակը, որ իջնում է կնոջ մեջքին, ծալքը, որի վրա թռչում է մահակի կոտրված ծայրը, զրնգացող սուրմաները, երկար մուկերը, եռոտանին, թեք ընկած թեյամանը, դատարկ տուփերը, կորեկ հացը, փոված խսիրը՝ ներքնակի փոխարեն, փափախը՝ բարձի տեղ:

Մի քանի նախադասությամբ գրողն ստեղծում է երկրի բնության և դաժան կենցաղի պատկերը. «Հետո Կաքավաբերդի գլխին լռություն իջավ: Օջախներում հանգավ կրակը: Եղավ խավար գիշեր: Գազանների ահից շները կուչ եկան վրանների առաջ: Ոչխարը պառկեց կանաչի վրա: Խսրի վրա մեկնվեց և կինը՝ թաղիքի տակ ծածկելով տղային»:

Դաժան բռնություն, դառն կյանք, անսահման խեղճություն, որ ծանրացնում է բախտը, աղավաղում գեղեցկությունը:

Այսպես է մտածում Բակունցը կյանքի մասին, մեկնում հոգու գաղտնիքները, մարդու և բնության կապերը, արվեստի դժվար հնարանքների միջոցով բացում պարզ հոգիների գեղեցկությունը: Այդպիսի նրբություններից է ձուլված նաև «Բրուտի տղան»:

Այս պատմվածքում Բակունցը նրբորեն խոսում է իր արվեստի կենսունակության մասին. «Ուզում եմ, որ այս անգարդ տողերը մնան այնքան, որքան կմնա մեր քարափը»: Նա իրոք հյուսում է անգարդ, խորունկ, բնական տողեր՝ մարդու բախտի, աշխարհի և մեծ բնության մասին:

Ավետիք Բսահակյանը 1934 թ. գրած իր հոդվածի մեջ շատ գեղեցիկ է բնութագրել Բակունցի աշխարհագրացումը, խառնվածքը, և նրբին հյուսվածքների ոճը. «Հոգր է Ակսելի մեջ բնապաշտական զգացողությունը, նա ապրում է, զգում է հողը, տարերքը, եղբայրական մի բարությանը համակված է դեպի բույսերը, թռչունները, կենդանիները: Հատկապես ինձ սիրելի է Ակսելի աշխարհզգացումը: Գեղեցիկ են շատ «Մպիտակ ձին», «Ծիրանի փողը», «Միրհավը», «Սև ցելերի սերմնացանը», իսկ ամենագեղեցիկը «Բրուտի տղան» է: Այնպես նուրբ են հյուսված այս պատմվածքները, այնպես նուրբ, կարծես հեքիաթ են, կարծես երազ ես տեսնում»:

«Բրուտի տղան» պատմվածքում ինքնատիպ գեղեցկությամբ է հյուսվում լեռնային Հայաստանի խորունկ պատկերը: Դա մի հազվագյուտ աշխարհ է՝ ուրույն ձևերով, բույրերով, ձայներով, արձագանքով: «Ահա մեր գյուղի, մեր Գյունեյ թաղի թիկիունքն է, մի խավար լաբիրինթ, որի խոր ձորերում բարակ առուն վշշում է փրփրած հեղեղի նման, ուր ծոփ ոտքի տակից գլորված ավազը խուլ արձագանքում է»:

Պատմվածքը համեմված է գեղեցկությունների ընկալումով՝ շաղախված ապրումներով, յուրօրինակ պատկերավորման միջոցներով, որոնք առանձնահատուկ հմայք են տալիս ստեղծագործությանը:

«Քամին հալածում է մառախուղի թանձր քույաները: Նրանք խրտնած ոչխարի պես փախչում են ձորերով: Քարափոր տներից կապույտ ծովը ձգվում է դեպի վեր և լիզում խոնավ ժայռերը»:

Կարող ես ջրի տակ խիճերը մեկ-մեկ համրել: Հորթերը վախվիսելով, պոչները վեր պահած, մտնում են ծանծաղուտը, ջուր խմում, սարսռալով ետ գալիս: Սառն է ջուրը, բարձր սարից է գալիս, ուր միշտ մոռյլ ամպ է նստում, ամպի տակից սառույցի հաստ շերտեր»:

Եզրակացություն

Ուզում եմ առանձնացնել «Ծիրանի փողը» պատմվածքը, որում առկա է և՛ կորսված հայրենիքի ողբերգություն, և՛ գոյատևման հավատ, և՛ մաքառման ոգի:

Ծննդավայրը կորցրած սասունցիների ողբերգությունն է անթեղված պատմվածքում, ինչը խորհրդանշում է ամբողջ արևմտահայության ճակատագիրը: Կորցրած երկիր, կորցրած սահմաններ և եղեռնի ու բռնազաղթի մնացորդներին վիճակված քարե դաշտ ու մի բուռ քարե հող: Պատմական ծննդավայրից հալածված մարդիկ հավաքվել են իրար գլխի, քարը մատում հող են դարձնում, հողը՝ հաց, իսկ ազատ ժամերին երգում են իրենց հին ու տխուր, նաև մարտական ու խրոխտ երգերը, պարում լեռնականների իրենց հպարտ պարերը, որոնք պար չեն սոսկ, այլ՝ կոնիվ ու պայքար: Հազրոյի նվագի կանչերը ոչ միայն քաղցրալուր մեղեդիներ էին, այլ՝ «կարոտի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի»: Այդ նվագը հոգու ձայն էր. «Հաղ մի երթամ տեսության մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բանձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու, նստիմ անուշ խոտերու վրեն, հենց գառներ մարդիկ նստեն իմ չորս բուր, երգեմ էնոնց խաղաղն զիմ երգեր: Փչեմ զիմ ծիրանի փող, էլման ծուխ բարձրանա երդիկներեն, իմեմ մեր լուս աղբրներեն, զիմ քրտինք կաթա մըր քարերու վրեն, մըր Մարութա բանձր սարի ամպ թող լիզա զիմ սիվտակ ոսկորներ...»:

Ծիրանի փողը հազարամյա եղեգան փողն է, որից ծնվեց «հուրհեր պատանեկիկը»: Հազրոյի ծիրանի փողից էլ էր «ծուխ ելանում, բոց ելանում» բայց դա հեռվում մնացած ծննդավայրի կարոտի ծուխն էր, կորստի ցավի բոցը, որից դարձյալ մի «խարտեաշ պատանեկիկ» պիտի ծնվեր և փրկեր երագի ու առասպելի վերածվող հայրենի եզերքը:

Մարդ չի կարող մոռանալ ծննդավայրը, հողը, հայրենի շիրիմները: Այդ կարոտն ապրում է Հազրոյի, Արցախը կորցրած նոր հազրոների՝ արցախցիների սրտում: Այսօր իր տունն ու օջախը բնավեր թողած արցախցին դեզերում է վիրավոր հավքի նման, արյուն է ձորում «քարացած» սրտից, հոգին ցավից ու վիրավորանքից կարկամել է, կուչ եկել, աչքերը պղտորվել են, հուսահատ ճիգ է գործադրում նոր բույն հյուսելու, նոր օջախ հիմնելու՝ թախծոտ հայացքը սնեռելով հեռուներում թողած հող հայրենին, թանկ ու նվիրված հիշողություններին, որոնք մնացին անցյալում, դարձան հուշ ու աղոթք վշտաբեր արցախցու շուրթերին: Բայց հայի ոգին անպարտելի է, կենսունակ, այն միշտ հառնել է մոխիրներից, սպիացել ու նոր շնչով արարել:



Իսկ թե ու՞մ պիտի ժառանգի իր ծիրանի փողը. Հազրոն ունի միմիայն մեկ պատասխան. «Ձիմ փող կիտամ զիմ քաջարծիվ թոռնիկին»: Այսինքն՝ ժառանգաբար պիտի ծխացնել հայրենիքի կարոտը, մինչև բացվեն հուստ դռները: Հազրոյի անունից հայրենիքի հարաստության հիշողությունն էր ավանդում Բակունցը և ծիրանի փողը պահ տալիս ժամանակներին, և նորօրյա ծիրանի փողից կծնվի գալիքի հայորդին.

Ուժն է դեռ ծնում իրավունքը,

Այսպիսին է օրենքն աշխարհի,

Ունեցիր երկաթե քո շերեփը,

Ամրացի՛ր գալիքի հայորդի:

Դու ես սպազան ու մեր հույսը,

Եղի՛ր միշտ տերը քո բախտի,

Ընկածին չի սիրում աշխարհը,

Արիացի՛ր, գալիքի՛ հայորդի: Գրիգոր Բանանց

Օգտագործված գրականության ցանկ

1. Հենրիկ Հարությունյան «Գեղարվեստական խոսք»

2. Հրանտ Թամրազյան «Մովեստահայ գրականության պատմություն»

3. Գայանե Օհանյան «Հայ գրականության քրեստոմատիա»